

հրատարակութիւնը սկսել է լոյս տեսնել պրակներով: Ցարդ տպած 64 երեսներից կարելի է եզրակացնել որ հայ ուսուցիչները, ծնողները և նոյնիսկ հասակաւոր աշակերտները կ'ունենան մի հմուտ ուղեցոյց՝ դպրոցական առողջապահական դանազան հարցերում: Պարզ ոճը, բազմաթիւ պատկերները դիւրամատչելի են դարձնում ճոխ բովանդակութիւնը: Յանկալի է, որ մեր բոլոր կրթարանները բաժանորդ գրուեն և այդպիսով արագացնեն այդ աշխատութեան տպագրութիւնը այս ուսումնական տարուայ սկզբում:

C. A. Мелик-Саркисян, «Хлопковое дѣло въ Ферганской области и мѣры къ его упорядоченію», Москва, 1904 г.

Ինչպէս գրքի վերնազրից երևում է, որ պ. Մելիք-Սարգսեանի նպատակն է ծանօթացնել ընթերցողին բամբակագործութեան այժմեան դրութեան հետ Ֆերգանում, և ցոյց տալ այն միջոցները, որոնց շնորհիւ զիւղատնտեսութեան այդ ճիւղը կարող է զարգանալ այնտեղ:

Դժուար է ամբողջ Ռուսաստանում ցոյց տալ մի տեղ, որը աւելի յարմար լինի բամբակագործութիւնով պարապելու համար, որքան Ֆերգանն է: Այստեղ բամբակի մշակութիւնը վերջին 10—15 տարում արել է մեծ առաջադիմութիւն, որը կարելի է տեսնել հետևեալ թուերից. 1889 թ. բամբակի ցանքսերը բունում էին 50,396 դեսետին, 2,270,000 փութ բամբակի (կորիզներով) արդիւնաբերութիւնով. մինչդեռ միևնոյն թիւը՝ 1901 թ. հասնում էր 233,685 դեսետինի, 11,688,320 փութ բամբակով: Հետաքրքիր է այստեղ նկատել, որ տեղական բամբակի ցանքսերը զգալի կերպով պակասում են, իսկ ամերիկական բամբակինը աճում: Օրինակ. 50,396 դես. ցանքսերից 22,490 դես. տեղականն էր բունում, իսկ 27,906 դես. ամերիկականը. մինչդեռ 1903 թուին 149,019 դես. առաջինի ցանքսերը բունում էին 12,954 դես., իսկ երկրորդինը՝ 136,065 դես.:

Այդ նոյն աղիւսակից, որտեղ բերուած են վերոյիշեալ թուերը, երևում է, որ բամբակի ցանքսերի տարածութիւնը վերջին տարիների ընթացքում ոչ թէ չեն աճում, այլ նոյնիսկ զգալի կերպով պակասում են: Այս երևոյթը բացի պատահական պատճառներից, բացատրւում է, լիսաւորապէս նրանով, որ Ֆերգանում համարեա էլ ազատ հող չի մնացել և երկրորդ, որ կեանքի համար անհրաժեշտ պիտոյքների գները շատ բարձր են, այնպէս, որ Ֆերգանի զիւղացիք ստիպուած են աճեցնել Սեպտեմբեր, 1905.

աւելի է կատինսիւ բոյսեր, ինչպէս են ցորեն, ւարի, որպէսզի գոնէ ապահովեն իրանց ապրուստը:

Նօսելով այսպիսով իր գրքի առաջի մասում . բամբակագործութեան զարգացման աննպաստ պայմանների մասին, պ. Մելիք Սարգսեան գրքի երկրորդ մասում առաջարկում է մի շարք միջոցներ:

Այս մասում պ. Մելիք-Սարգսեան ոչ մի նորութիւն չի ասում, այլ կրկնում է այն բոլոր միջոցները, որոնք դեռ մի քանի անգամ առաջարկուել են բամբակագործների համաժողովներում, և որոնց մասին մենք առիթ ենք ունեցել խօսել «Մուրճ»-ի այս տարուայ համարներից մէկում\*):

Յամենայն դէպս գիրքը կազմուած է գործին և պայմաններին լաւ տեղեակ մարդու ձեռքով և հետաքրքիր է:

Նր. Սար.

### ՆՈՐ ՄՏԱՑՈՒԱԾ ԳՐԳԵՐ

- 1) Մեսրոպ վարդապետ, «Էջմիածին և հայոց հնագոյն եկեղեցիները». (հայերէն, ռուսերէն և գերմաներէն լեզ. և բաղձաթիւ պատկերներով), 1905, Պետերբուրգ, 1 ը.:
- 2) «Կանոնադրութիւն ղեմատվային նահանգական և գաւառական հաստատութիւնների», Բարձրագոյն հաստատուած 1864 թ. յունիսի 1-ին:
- 3) Փառնակէս, «Ձուտողի մալը ուտողին հալալ ա» կամ «Ճարպիկ փաստաբան», վոդրվիլ 1 արար., 1905, Երևան, 40 կ.:
- 4) Փառնակէս, «Սօլերա», վոդ. 1 արար., 1905, Երևան, 40 կ.:
- 5) Մ. Տէր-Սարգսեան, «Իմարկածները» (զուարճակի իրողութիւն) 1905, Երևան, 20 կ.:
- 6) Միր-Հազոր, «Յեղափոխական վիպակներ», 1905, Բոստոն, 5 սէնթ.:
- 7) Nerses Ter-Mikaëlian. «Das Armenische Hymnarium» Studien zu seiner geschichtlichen Entwicklung. 1905, Leipzig:
- 8) «Натуральная оспа и совѣты матерямъ при оспопрививаніи дѣтей. сост. ст. мед. Г. Апресянцъ.

\*) № 1 էր. 140.